

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԿՈԼԵԳԻԱ**

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ**

17 մայիսի 2016 թվականի

թիվ 7

քաղ. Մոսկվա

**Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի  
անցակետերը տեսչական-զննիչ համալիրներով հագեցնելու եւ դրանք  
օգտագործելու մասին ընդհանուր դրույթների վերաբերյալ**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 43-րդ կետի 13-րդ կետին, 2-րդ եւ 6-րդ ենթակետերին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) համապատասխան, Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերը տեսչական-զննիչ համալիրներով հագեցնելու եւ դրանք օգտագործելու մասին ընդհանուր դրույթների մասով միասնական մոտեցումներ մշակելու նպատակներով,

**հանձնարարում է** Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, սույն հանձնարարականի հրապարակման օրվանից առաջնորդվել Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերը տեսչական-զննիչ համալիրներով հագեցնելու եւ դրանք օգտագործելու մասին ընդհանուր դրույթներով՝ հավելվածի համաձայն:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կոլեգիայի

2016 թվականի մայիսի 17-ի

թիվ 7 որոշման

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի  
անցակետերը տեսչական-զննիչ համալիրներով հագեցնելու  
և դրանք օգտագործելու մասին**

I. Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի  
անցակետերը տեսչական-զննիչ համալիրներով հագեցնելը և այդպիսի  
համալիրների տեղակայման սկզբունքները

1. Տեսչական-զննիչ համալիրների (այսուհետ՝ ՏՁՀ) տեղակայումն առաջնահերթ կարգով իրականացվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում (այսուհետ՝ համապատասխանաբար՝ Միություն, անցակետ)՝ հաշվի առնելով Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) հիմնական միջազգային տրանսպորտային միջանցքների, հիմնական տրանսպորտային մայրուղիների անցումը և ապրանքային հոսքերի առավելագույն ցուցանիշները, ինչպես նաև Միության մաքսային սահմանով թմրանյութերի, պայթուցիկ նյութերի և այլ վտանգավոր ապրանքների (այդ թվում՝ զենքի և զինամթերքի) հնարավոր ապօրինի կերպով տեղափոխման ուղիների վերլուծության արդյունքները:

2. Անցակետով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների քանակի գնահատման համար առաջարկվում է օգտագործել արտահանական, ներմուծական և տարանցիկ փոխադրումների վերաբերյալ

վիճակագրությունը, հաշվի առնել միջազգային տրանսպորտային միջանցքների զարգացման կանխատեսումները եւ ապրանքների՝ անցակետերով փոխադրման ծավալների աճի տեմպերը:

3. ՏՁՀ-ները կարող են կիրառվել ժամանակավոր սխեմայով այն անցակետերում, որոնք տեղակայված են հիմնական միջազգային տրանսպորտային միջանցքներից դուրս, որոնցով բեռնաշրջանառության ծավալն աննշան է եւ Միության իրավունքի մաս կազմող, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերի եւ ակտերի խախտմամբ տեղափոխվող ապրանքներ հայտնաբերելու ռիսկը նվազագույն է:

4. ՏՁՀ-ները տեղակայելիս կարող է նախատեսվել ՏՁՀ-ներով ներմուծվող եւ արտահանվող ապրանքների դարձափոխային տեղաշարժի սկզբունքը:

## II. Անցակետերի տարբեր տեսակների համար ՏՁՀ-ներ ընտրելը

5. Անցակետերում առաջարկվում է տեղակայել ՏՁՀ-ների հետեւյալ տեսակները.

ա) ստացիոնար տեսակի ՏՁՀ՝ մաքսային հսկողության ենթակա օբյեկտի (այսուհետ՝ հսկողության ենթակա օբյեկտ) միապրոյեկցիոն կամ երկպրոյեկցիոն պատկերման տարբերակով՝ ծովային (գետային, լճային) անցակետերում: ՏՁՀ-ները տեղակայվում են անցակետի այն հատվածներում, որոնք ապահովում են հսկողության ենթակա օբյեկտների առավելագույնս հարմար մուտքը ՏՁՀ-ներ: Թույլատրվում է կիրառել շարժական ՏՁՀ-ներ անցակետի սահմաններում առանձնացված մաքսային հսկողության գոտում.

բ) ստացիոնար տեսակի ՏՁՀ՝ մաքսային հսկողության ենթակա օբյեկտի միապրոյեկցիոն պատկերման տարբերակով՝ երկաթուղային անցակետերում:

ՏՁՀ-ները գլխավոր մայրուղիներում տեղակայելու դեպքում հսկողության ենթակա օբյեկտի սկանավորման արագությունը պետք է կազմի առնվազն 10

կմ/ժամ.

գ) ստացիոնար կամ վերաբազավորվող տեսակի ՏՁՀ՝ հսկողության ենթակա օբյեկտի միապրոյեկցիոն պատկերման տարբերակով՝ ավտոմոբիլային անցակետերում:

ՏՁՀ-ները տեղակայվում են անցակետի այն հատվածներում, որոնք ապահովում են հսկողության ենթակա օբյեկտների առավելագույնս հարմար մուտքը ՏՁՀ-ներ: Թույլատրվում է կիրառել շարժական ՏՁՀ-ներ անցակետի սահմաններում առանձնացված մաքսային հսկողության գոտում:

6. Մաքսային հսկողության արդյունավետությունը բարձրացնելու եւ ստացիոնար ՏՁՀ-ներով սարքավորված անցակետերում օպերատիվ խնդիրները լուծելու նպատակով կարող են լրացուցիչ կերպով կիրառվել շարժական ՏՁՀ-ներ:

### III. ՏՁՀ-ների հիմնական տեխնիկական բնութագրերը

7. ՏՁՀ-ների հիմնական տեխնիկական բնութագրերի առաջարկվող պարամետրերը թվարկված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

ՏՁՀ-ների տեսակների հիմնական տեխնիկական բնութագրերը	ՏՁՀ-ների տեսակները				
	ավտոմոբիլային անցակետում	ստացիոնար երկաթուղային անցակետում	ծովային անցակետում	վերաբազավորվող շարժական	
Ֆոտոնային ճառագայթման էներգիա (առնվազն)	6 ՄէՎ	6 ՄէՎ	6 ՄէՎ	4 ՄէՎ	3,8 ՄէՎ
Ներթափանցման ունակությունը՝ պողպատի մասով	320 մմ (մինչև 24 մ/րոպ արագության դեպքում)	320 մմ (մինչև 30 կմ/ժամ արագության դեպքում)	370 մմ (մինչև 24 մ/րոպ արագության դեպքում)	320 մմ (մինչև 24 մ/րոպ արագության դեպքում)	270 մմ (մինչև 24 մ/րոպ արագության

ՏՁՀ-ների տեսակների հիմնական տեխնիկական բնութագրերը  (առնվազն)	ՏՁՀ-ների տեսակները				շարժական դեպքում)
	ավտոմոբիլային անցակետում	ստացիոնար երկաթուղային անցակետում	ծովային անցակետում	վերաբազավորվող	
Արագացուցչի ազդակների ընթացքի հաճախությունը  (առնվազն)	200 Հց	2000 Հց	200 Հց	200 Հց	100 Հց
Պղնձալարի հայտնաբերում՝ առանց պատնեշի (տրամագիծը՝ առնվազն)	0,5 մմ	0,8 մմ	0,5 մմ	0,8 մմ	1 մմ
Պղնձալարի հայտնաբերում՝ 100 միլիմետրանոց պղնձյա պատնեշի հետևում (տրամագիծը՝ առնվազն)	1,5 մմ	2 մմ	1,5 մմ	2 մմ	2 մմ
Պղնձալարի հայտնաբերում՝ 250 միլիմետրանոց պղնձյա պատնեշի հետևում (տրամագիծը՝ առնվազն)	9 մմ	9 մմ	9 մմ	9 մմ	9 մմ
Ջերմաստիճանների ընդգրկույթը, որում		-50°C-ից մինչև +50°C		-40°C-ից մինչև +50°C	-30°C-ից

ՏՁՀ-ների տեսակների հիմնական տեխնիկական բնութագրերը	ՏՁՀ-ների տեսակները			
	ավտոմոբիլային անցակետում	ստացիոնար երկաթուղային անցակետում	ծովային անցակետում	վերաբազավորվող շարժական
պետք է գործի ՏՁՀ-ն				մինչև +50°C
Խոնավության ընդգրկույթը, որում պետք է գործի ՏՁՀ-ն		10%-ից մինչև 95 %		10%-ից մինչև 95% 10%-ից մինչև 95%
ՏՁՀ-ի անընդմեջ աշխատանքի ժամանակը		օրը 24 ժամ		օրը 24 ժամ՝ տեխնիկական սպասարկման համար ընդմիջմամբ
Ստուգվող օբյեկտի կողմնորոշիչ չափսերը (երկարությունը, բարձրությունը, լայնությունը),	20 x 3 x 4,5 մ 4,48 x 5,3 մ	20 x 3 x 4,5 մ	20 x 3 x 4,5 մ	20 x 3 x 4,5 մ
Հսկողության ենթակա օբյեկտների ՏՁՀ-ի թողունակությունը ժամում (առնվազն)	25	25	25	20
Ստացված ռենտգենային պատկերի վերլուծության մասով ՏՁՀ-ի օպերատորների աշխատակայանների	1-2	1-3	1-3	1-2

ՏՁՀ-ների տեսակների հիմնական տեխնիկական բնութագրերը	ՏՁՀ-ների տեսակները			
	ավտոմոբիլային անցակետում	ստացիոնար երկաթուղային անցակետում	ծովային անցակետում	վերաբազավորվող շարժական
Թիվը				
Հսկողության ենթակա օբյեկտի պատկերման պրոյեկցիաների	1	1	1-2	1
Թիվը				
Պատկերի վերլուծություն՝ օրգանական եւ ոչ օրգանական նյութերի, մետաղների ճանաչման հնարավորությամբ (Z-գործառույթ) (խմբերի թիվը, առնվազն)	3	2 (մինչեւ 30 կմ/ժամ արագության դեպքում)	3	3
Առավելագույն կլանված դոզան (ոչ ավելի, քան)	60 մկՋվ	60 մկՋվ	60 մկՋվ	60 մկՋվ

8. Հարկավոր է օգտագործել ՏՁՀ-ներ, որոնք ապահովում են՝

ա) հսկողության ենթակա օբյեկտի պարունակության ստվերային պատկերի ստացումը 1 կամ 2 պրոյեկցիաներում՝ կախված ՏՁՀ-ի մոդիֆիկացիայից, եւ հսկողության ենթակա օբյեկտի նախնական նույնականացումը.

բ) հսկողության ենթակա օբյեկտի տեղակայման վայրի եւ գծային չափերի գնահատումը.

գ) հսկողության ենթակա օբյեկտի կառուցվածքային խոռոչների եւ տարածությունների ստվերային պատկերի դիտումը (օրինակ՝ տրանսպորտային միջոցների պատերի, բեռնարկղերի առաստաղային ծածկերի եւ հատակների միջեւ).

դ) հսկողության ենթակա օբյեկտի առանձին գոտիների պատկերների մանրամասն եւ հատվածական դիտումը՝ պատկերը մեծացնելու հնարավորությամբ.

ե) հսկողության ենթակա օբյեկտի նյութերի խմբերի ճանաչումը եւ վիզուալիզացիան.

զ) հսկողության ենթակա օբյեկտի ստվերային պատկերի պահպանումը ՏՁՀ-ի հիշողության մեջ, դրա տեսագրումը տեղեկությունների կրիչի վրա.

է) հսկողության ենթակա օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը սույն փաստաթղթի V բաժնին համապատասխան էլեկտրոնային տեսքով փոխանցելու հնարավորությունը.

ը) հսկողության ենթակա օբյեկտի, սկանավորում իրականացնելու ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության արտացոլումը ՏՁՀ-ի մոնիտորի վրա.

թ) ՏՁՀ-ի վիճակի նկատմամբ հսկողությունը եւ դրա տեխնիկական վիճակի, ՏՁՀ-ի տեսահսկման եւ ճառագայթային անվտանգության համակարգերի վիճակի մասին հաղորդագրության տրամադրումը:

9. Աննշան տեսակարար խտությամբ հսկողության ենթակա օբյեկտների



(օրինակ՝ ավիացիոն բեռնարկղերի, թեթև մարդատար ավտոմոբիլների) մասով թույլատրվում է օգտագործել ոչ պակաս, քան 1 ՄԷՎ ֆոտոնային ճառագայթման էներգիայով ՏՁՀ-ներ:

IV. ՏՁՀ-ների անվտանգության հետ կապված հարցերը եւ սահմանափակումները անցակետերում ՏՁՀ-ներ օգտագործելիս

10. ՏՁՀ-ները պետք է անվտանգ լինեն մարդու կյանքի եւ առողջության, կենդանիների եւ բույսերի համար, այդ թվում՝ ճառագայթային անվտանգության տեսանկյունից:

11. ՏՁՀ-ների հետ կապված սահմանափակման գոտու սահմանները պետք է սահմանվեն այնպես, որ ՏՁՀ-ի ցանկացած թույլատրելի աշխատանքային ռեժիմի դեպքում ֆոտոնային ճառագայթման դոզայի հզորությունը հասանելիության սահմանափակման գոտու արտաքին սահմանին չգերազանցի 1,0 մկՋ/ժամ-ը:

12. Մաքսային տեսազննում իրականացնելիս ՏՁՀ-ներ չեն օգտագործվում հետեւյալ դեպքերում՝

ա) հսկողության ենթակա օբյեկտի չափերը չեն համապատասխանում ՏՁՀ-ի տեխնիկական հնարավորություններին.

բ) հսկողության ենթակա օբյեկտ են 2-րդ աղյուսակում նշված ապրանքները (աղյուսակի կիրառման համար անհրաժեշտ է օգտվել ապրանքի ծածկագրից՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան, ապրանքի անվանումը ներկայացված է միայն օգտագործման հարմարության համար):

Ապրանքի անվանումը

ծածկագիրը

- |     |   |                  |
|-----|---|------------------|
| 1.  | Կենդանի կենդանիներ  | 0101-0106        |
| 2.  | Կենդանի ձուկ  | 0301             |
| 3.  | Կենդանի կենդանիներ, որոնք տեղափոխվում են շրջիկ կրկեսներով եւ շրջիկ գազանանոցներով   | 9508 10 000 0-ից |
| 4.  | Ընտանի հավերի բեղմնավորված ձու՝ ինկուբացիայի համար                                  | 0407 11 000 0    |
| 5.  | Այլ թռչունների բեղմնավորված ձու՝ ինկուբացիայի համար                                 | 0407 19          |
| 6.  | Տարբեր տեսակի ձկների բեղմնավորված ձկնկիթ  | 0511 91 901      |
| 7.  | Խեցգետնակերպերի, կակղամորթների, ջրային այլ անողնաշարավորների բեղմնավորված ձկնկիթ    | 0511 91 909 0-ից |
| 8.  | Կենդանիների սաղմեր  | 0511 99 852      |
| 9.  | Ցուլի սերմնահեղուկ  | 0511 10 000 0    |
| 10. | Հովատակների, արու ոչխարների, այծերի եւ այլ կենդանիների սերմնահեղուկ                 | 0511 99 853      |
| 11. | Պատվաստանյութեր՝ մարդկանց համար   | 3002 20 000      |
| 12. | Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր                                       | 3002 30 000 0    |
| 13. | Աճեցրած մանրէներ  | 3002 90 500 0    |
| 14. | Իմունային շիճուկներ, արյան այլ բաղադրամասեր եւ մոդիֆիկացված իմունաբանական արտադրանք | 3002 10-ից       |

- |     |   |                                      |
|-----|---|--------------------------------------|
| 15. | Կենդանական արյուն՝ պատրաստված թերապեւտիկ, կանխարգելիչ կամ ախտորոշման նպատակներով օգտագործելու համար   | 3002 90 300 0                        |
| 16. | Պայմանականորեն պաթոգեն եւ պաթոգեն գենաինժեներային օրգանիզմներ   | 2934 99 900 0-ից<br>3002 90 900 0-ից |
| 17. | Պատրաստի մշակային միջավայրեր՝ նախատեսված մանրէներ կամ բույսերի, մարդու կամ կենդանիների բջիջներ աճեցնելու կամ դրանց կենսագործունեությունն ապահովելու համար | 3821 00 000 0                        |
| 18. | Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր՝ տակդիրով   | 3822 00 000 0                        |
| 19. | Մարդու օրգաններ ու հյուսվածքներ   | 3001 90-ից                           |
| 20. | Արյուն եւ դրա բաղադրիչները՝ նախատեսված ոչ ազգակցական փոխպատվաստում իրականացնելու համար, հեմոպոետիկ (արյունաստեղծ) ցողունային բջիջներ եւ ոսկրածուծ         | 3002 10-ից<br>3002 90-ից             |

V. ՏՁՀ-ի օգտագործման ժամանակ ստացված տվյալների տեղեկատվական փոխանակում

13. ՏՁՀ-ների միջոցով ստացված հսկողության ենթակա օբյեկտների ստվերային պատկերներն առաջարկվում է էլեկտրոնային եղանակով փոխանցել անդամ պետությունների լիազորված մարմիններ:

14. Անցակետերը ՏՁՀ-ներով համալրելու հետ կապված ծախսերը նվազեցնելու եւ մաքսային հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է կազմակերպել ՏՁՀ-ների միջոցով անցկացված մաքսային հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների

Էլեկտրոնային եղանակով փոխանակում՝ անդամ պետությունների լիազորված մարմինների, ինչպես նաև նշված մարմինների եւ անդամ պետություններ չհանդիսացող պետությունների լիազորված մարմինների միջև: